# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Արամուս բնակավայր 23.12.2024 թ.

Սույն թվականի դեկտեմբերի 23-ին, ժամը 12:00-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Էյ Էմ Թի» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «Էյ Էմ Թի» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ վարչական ղեկավար Ստեփան Հակոբյանը, այնուհետև խոսքը փոխանցեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանին: Հարությունյանը նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Հարությունյանը ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Ընկերության ներկայացուցիչը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, խոսեց բնապահպանական ազդեցությունների և դրանք մեղմացնող միջոցառումների մասին:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվելուց հետո Հարությունյանը խոսքը փոխանցեց ներկաներին՝ իրենց հուզող հարցերը հնչեցնելու համար:

Բնակիչների կողմից հարցեր չհնչեցին:

Հարությունյանի կողմից հնչեցին հարցեր հանքավայրի հողերի նպատակային նշանակության, արդյունահանվող և մարվող պաշարների, տեխնիկական ջրի ջրառի, մշտադիտարկումների համար նախատեսված գումարների վերաբերյալ: Ծավալվեց քննարկում և հարցուպատասխանի միջոցով բոլոր հարցերը պարզաբանվեցին:

Ք. Հարությունյանը ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր համայնքի բնակիչներ, Արամուս բնակավայրի վարչական ղեկավարը, Աբովյան համայնքի և նախաձեռնողի ներկայացուցիչները:

Բնակիչները հավանություն տվեցին նախատեսվող գործունեությանը:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

**Վարող և քննարկումների պատասխանատու՝** **Ք. Հարությունյան**

**«Էյ Էմ Թի» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝** **Հ. Ավետիսյան**